Դուռնապանք տաճարին Ս. Յարութեան՝ մուտս եկեալ ըզչամբ սահմանին, բանացեալ էին՝ ի վերայ ուխտաւորաց և միաբանաց երից վանօրէից, զի բաց՝ ի սահմանեալ մէն մի փարայից պահանջէին և զայլ իրս, երբեմն յայտնի և երբեմն՝ ի ծածուկ, եւ երբեմն բազմութեամբ եկեալ կանգնէին՝ ի դուռն Ս. Գերեզմանին, և երբեմն ելեալ չրջէին՝ ի սենեակս ուխտաւորաց. նեղեալ յայսպիսի անկարգութեանց՝ միաբանեալ երից վանօրէից գրեցին՝ ի Կոստանդինուպոլիս խափանել զնվաչել գործս նոցին։

Յայնմ է թէ, որպէս գրեցաք՝ ի նախընթաց գլուխն, յաւուրս Յովակիմ Պատրիարքի, ազգայինք Բիւզանդիոյ առաքեալ էին կանոնական գիրս ինչ՝ վարիլ նովաւ Պատրիարքին և խորհրդականաց, և՝ ի նմին ժամանակի ընկալեալ և կնքեալ էին զայն։

Իսկ այժմ վերստին գրեցին ազգայինք չխափանել ըզկանոնն զայն, նմին իրի և Պետրոս Եպիսկոպոս եւս ընկալաւ զայն, և եզ զկնիք իւր՝ ի ներքոյ կնքոյ Յովակիմայ, և սահմանեաց վարիլ ըստ տրամադրութեան նորին ինքն և խորհրդականք իւր. և բաց յայսմանէ կարգաւորեաց զաւուրսն՝ կարգաւ գրել անդ զիւրաքանչիւր տարւոյ զկնի և զմուտս Ս. Աթոռոյն, և բոլոր գործակալաց և Նուիրակաց, և ժողովել զամենայն արդիւնս՝ ի մի արկղ՝ զոր կոչէին Օբշոյէ Սնոռ՝ մինչեւ ցժամուց Պատրիարքին։

Պետրոս Եպիսկոպոս խնդրեաց յազգայինոց Կոստանդինուպոլսոյ նորոգել զկանոնն զայն, եւ բացորոշ գրել՝ ի նմա զանուանս Խորհրդականաց։

Այլազգիք Պրուսայ քաղաքի քակեցին զեկեղեցին Հայոց՝ և Արքայ հրամայեաց վերստին շինել զայն, և բառնալ զգլուխս ոմանց երեւելի այլազգեաց տեղւոյն։

Յովակիմ Եպիսկոպոս երկայնաբազուկ Արզրումեանց խնդրեաց յերուսաղէմ զպատուութիւնս և զանուանս առաջին Պատրիարքաց, բայց ոչ ոք՝ ի միաբանից փոխէ կալաւ հետաքննել և առաքել զայն։

Յաւուրս Պետրոսի զարդարեցաւ յախճապակեայ (չինի) շինուածովք որք եկեղեցւոյ Ս. Էջմիածնի, ՝ի յիշատակ հետարացի Պաշպազիրկեանեան Յովհաննէսի եւ յետ սորա սիրգն եղեւ եկեղեցւոյն Ս. Հրեշտակապետին։ Ծանուն